ԻՎԵԹ ԹԱՋԱՐՅԱՆ, ա.գ.թ.
ՄՄ անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, Մատենադարան, Արևելագիտության բաժնի ավագ գիտաշխատող
ԵՊՀ հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի դոցենտ,
էլ. փոստ՝ yvettetaj@yahoo.com
DOI: 10.56813/2953-786X-2022.2-334

ԱՆՎԱՆԻ ՀԱՅԵՐԸ ՂԱՋԱՐԱԿԱՆ ԻՐԱՆՈՒՄ

Պատմական տարբեր իրադարձությունների հետևանքով ու ճակատագրի բերումով հայազգի բազմաթիվ արվեստագետներ ապրել և ստեղծագործել են աշխարհի տարբեր երկրներում: Հայ գաղթականության պատմությունը, լինելով հայ ժողովրդի պատմության բաղկացուցիչ մասը, եղել է և կա հայ և օտար պատմաբանների, հայագետների ուսումնասիրության առարկաներից մեկը: Հայերը կամա թե ակամա իրենց մասնագիտությամբ, արհեստով կամ արվեստով բազմիցս նպաստել են հենց այդ երկրների մշակույթի զարգացմանը:

Հաստատվելով Սպահանում՝ հայերը մեծ դեր ունեցան Իրանի շենացման գործում: Քաղաքականության, արվեստի, գիտության, երաժշտության, կինոյի, գեղանկարչության, թատրոնի և լուսանկարչության բնագավառներում, գրատպության, արդյունաբերության ու ճարտարապետության ոլորտներում իրանահայերի և մանավանդ՝ նորջուղայեցիների անունները դասվում են Իրանի առաջավոր գործիչների շարքին: Այս գործընթացը շարունակվեց նաև Ղաջարական Իրանում (Թաջա-

ության, 2021, էջ 13)[1]: Բազմաթիվ պատմաբաններ լայնորեն ուսումնասիրել են Ղաջարական Իրանի պատմությունը: Ինչպես նախկինում, այնպես էլ այսօր Ղաջար իշխանության վերաբերյալ գնահատականը միշտ չէ, որ միանշանակ է տրվել:

Ղաջարների կառավարման ժամանակ՝ հատկապես թագավոր Աբբաս Միրզայի[2] օրոք, արևմտյան հասարակությունը սկսեց մեծ հետաքրքրություն ցուցաբերել Մերձավոր Արևելքի՝ այդ թվում նաև Իրանի նկատմամբ: Աշխարհը Արևելքը դիտում էր որպես սկիզբների սկիզբ: Գայթակղված Արևելքի խորհրդավորությամբ՝ երիտասարդ Եվրոպան ջանում էր փախուստի դիմել իրական ժամանակից ու հաղորդակցվել այն ուղուն, որը տանում է դեպի վաղնջական քաղաքակրթությունների խորքը: Արևմուտքի կողմից Իրանին ուշադրություն դարձնելը պայմանավորված էր նաև մեկ այլ հանգամանքով. Արևմուտքը փնտրում էր նոր շուկաներ, որոնցից մեկը, թերևս, Իրանն էր, որի նկատմամբ հետաքրքրությունը աճեց հատկապես Ղաջար հարստության (1785-1925 թթ.) թագավոր Նասեր էդ-Դին շահի (1848-1896 թթ.) իշխանության օրոք (Մալեքզադե, 1328, էջ 25-33): Իրանահայ գաղութի իրավիճակը սկսվեց բարելավվել սկզբում Աբբաս Միրզայի, իսկ հետո՝ հատկապես Նասեր էդ-Դին շահի ժամանակ:

---

[1] Ղաջարական հարստության հիմնադիրն է Աղա Մուհամմեդ Խանը (1794-1797 թթ.): Հաջորդաբար իշխել են Ֆաթհ Ալի շահը (1797-1834 թթ.), Մուհամմեդ շահը (1834-1848 թթ.), Նասեր էդ-Դին շահը (1848-1896 թթ.), Մուզաֆեր էդ-Դին շահը (1896-1907 թթ.), Մուհամմեդ Ալի շահը (1907-1909 թթ.) և վերջապես Ահմեդ շահը (1909-1925 թթ.):

[2] Աբբաս Միրզան (1789-1833 թթ.) Ֆաթհ Ալի շահի որդին էր: Նա պետական և ռազմական գործիչ էր, որ գլխավորելով Իրանի ներքին և արտաքին քաղաքականությունը ձգտում էր ուժեղ կենտրոնացված պետություն ստեղծել:

Նասեր էդ-Դին շահի մասին կան հակասական կարծիքներ. նրան համարում էին ձախողված ղեկավար, մինչդեռ շահը իրականացրել էր մի շարք բարեփոխումներ, սահմանել բազմաթիվ օրենքներ՝ կապված նոր տնտեսվարման և բանակի հետ: Նրա օրոք ստեղծվեցին կապի ծառայություններ, փոստատներ, զարգացան առևտրի և կրթության օջախները: Սակայն ավանդապաշտ հոգևորականության աչքում այդ ամենը հեռու էր բարենորոգում լինելուց (Եգանյան, 1966, էջ 9-14):

Ընդդիմության հիմնական փաստարկն այն էր, որ թագավորը մի շարք հատուկ իրավունքներ (կոնցեսիաներ) է հատկացրել օտարազգիներին[3]: Կոնցեսիաներ էին ստացել Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը: Այդ իրավունքների մեջ ամենակարևորը Ռոյթերի (Reuter, 1872) և ծխախոտի (1890) կոնցեսիաներն էին: Միաժամանակ Ռոյթերին լիազորվում էր մի շարք իրավունքներ: Այսպիսով, «Baron Julius de Reuter»-ը իրավունք ստացավ երկաթգծային ճանապարհների, միջքաղաքային բեռնափոխանակման, ոռոգման ջրի, գազի մատակարարման, հանքանյութերի արտահանման, ազգային բանկի հիմնադրման և տարբեր գործարաններ կառուցելու համար (Yarshater , 1983, pp. 15-18)[4]:

---

[3] Նասեր էդ-Դին շահի օրոք ուժեղացել է եվրոպական երկրների՝ հատկապես Ռուսաստանի ազդեցությունը Իրանում: 1921 թ. Թեհրանում կատարվեց հեղաշրջում, իսկ 1925 թ. Ղաջարական դինաստիան տապալվեց: Նույն թվականի դեկտեմբերի տասներկուսին Իրանում Փահլավի դինաստիայի առաջին թագավոր հռչակվեց Ռեզա խանը (1925-1941 թթ.), որը հայտնի է նաև որպես Ռեզա Խան-ե Փահլավի:

[4] Երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական ծանր իրավիճակը, ֆեոդալական շահագործումը, եվրոպական տերությունների գաղութային քաղաքականությունը հանգեցրին 1905-1911 թթ. հեղափոխությանը: Պարսկաստանում սկզբնավորվեց բուրժուա-դեմոկրատական և ազգային-ազատագրական շարժումը:

19-րդ դարասկզբին Ռուսաստանի և Իրանի միջև կնքվեց Թուրքմենչայի պայմանագիրը: Իրանի անդրկովկասյան տիրույթները, այդ թվում՝ Արևելյան Հայաստանը, միացվեցին Ռուսաստանին և իրանահայերի մեծ արտագաղթ սկսվեց դեպի երկիր: 1828-1830 թթ. մեծ քանակով հայեր Իրանի հյուսիսային նահանգներից տեղափոխվեցին Երևանի և Նախիջևանի նահանգներ, որի հետևանքով Ատրպատականի թեմի բնակչության թիվը բավականաչափ նվազեց: Արտագաղթը շարունակվեց մինչև 19-րդ դարի կես: Իրանական իշխանությունները կրկին սկսեցին մեծ ուշադրություն ցուցաբերել հայերի նկատմամբ: Իրանահայերի վիճակը մասամբ բարելավվեց, երբ կառավարությունը երկիրը տնտեսական լճացումից դուրս բերելու նպատակով հրապարակեց մի շարք հրամանագրեր, որոնք վերացրին հայերի նկատմամբ սահմանափակումները, արգելվեց բռնի հավատափոխությունը, տրվեց դավանանքի ազատություն, դպրոցներ բացելու արտոնություններ շնորհվեց հայերին և վերաօրինականացվեցին հայկական եկեղեցիների կալվածքները: Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվում են բազմաթիվ վավերագրեր՝ հայ գյուղացիներից և քաղաքային բնակչությունից հարկերի գանձման կարգավորումների վերաբերյալ: Այդպիսիքներից էին Աբբաս Միրզայի (1812 թ.) Ատրպատականի պետական պաշտոնյաներին ուղղված թիվ 633 հրամանագիրն ուղղված Եփրեմ կաթողիկոսին, որը մարդկանց ավելորդ պահանջներով չխանգարելու մասին է վկայում[5]: Մյուսը՝ Մատենադարանում պահվող թիվ 144 հրամանգիրն է, որը Աբբաս Միրզան (1825 թ.)

[5] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ե, վավ. 633, բնագիր, Մեծ. 36 x 50.5 սմ, գիր՝ շիքասթե-նասթալիղ: Ավելին տե՛ս Կոստիկյան Ք., Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, Երևան, 2021, էջ 424:

հայերի ժառանգության իրավունքը մահմեդականներին հավասարեցնելու վերաբերյալ է հրամանագրել[6]: Այսպիսով, Ղաջարների օրոք անձի և գույքի ապահովության զգացում առաջացավ իրանահայերի մոտ:

19-րդ դարի երկրորդ կեսին Իրանում նկատվում է տնտեսական աշխուժացում, որի գործում բավականին մեծ էր իրանահայերի ներդրումը: Նասեր էդ-Դին շահը բարձր է գնահատել հայերի դերը Իրանի տնտեսական, քաղաքական, դիվանագիտական ու մշակութային կյանքում ու ինչպես Աբբաս Միրզան, այնպես էլ Նասեր էդ-Դին շահը իր թագավորության տարիներին մի շարք արտոնություններ է շնորհել նրանց: Իրանահայ վաճառականները մեծաքանակ ապրանքներ էին արտահանում և ներմուծում Իրան: Նրանք մրցում էին թե՛ իրանական, թե՛ արևմտաեվրոպական վաճառականների հետ: Այս ոլորտում հայտնի անուններ էին Թամանյանները, Արզումանյանները, Նազարբեկյանները, Շահգելդյանները: Նրանք աչքի ընկնող դեր ունեին նաև բանկային ծառայությունների և արդյունաբերական շինարարության բնագավառում:

Հայ արհեստավորների արտադրանքը թե՛ Իրանում և թե՛ նրա սահմաններից դուրս ունեցել է մեծ պահանջարկ: Մասնավորապես գնահատվել է հայ ոսկերիչների[7], մուշտակագործների[8], մետաքսագործների, գորգագործների, դերձակ-

---

[6] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 144, բնագիր, Մեծ. 30 x 41.5 սմ, գիր՝ շիքասթե-նասթալիղ: Ավելին տե՛ս Կոստիկյան Ք., նույնի՝ էջ 519:

[7] Արքունական հանրահայտ ոսկերիչ վարպետներից կարելի է հիշատակել Թադևոս Առաքելյանին, Թուրապ Խան Ստեփան Եղիգարյանին, Առաքելին, Թովմաս Խանին, Մելիք Թովմասյանին և այլն:

[8] Հայտնի մուշտակագործներից կարելի է հիշատակել Հովհաննես Ղազարյանին:

ների, հյուսների, կոշկակարների աշխատանքը: Մեծ թիվ են կազմում նաև որմնադիրները և քարահատները (Գորոյանց, 1968, էջ 6-9):

Ապակեգործության ու գունավոր ապակիներից լուսամուտների պատրաստման գործում իրանահայերը իրենց վարպետությամբ ու անթերի աշխատանքով նույնպես արժևորվել ու հիշատակվել են: Ֆաթհ Ալի շահի արքայական պալատը ապակեզարդ դարձնելու համար Սպահանից Թեհրան են տարվել 12 հայ արհեստավորներ:

1850-ական թվականներից զգալիորեն աճել է հայ մտավորականության և արվեստի հայ գործիչների թիվը, որոնց մեծ մասը բարձրագույն կրթություն էր ստացել Եվրոպայում ու ԱՄՆ-ում: Վերջինս Նասեր էդ-Դին շահի կողմից Թաղի խանին «Սադր-ե ազամ[9]», «Ամիր քաբիր[10]» նշանակելու և վերջինիս հետագա գործունեության հետ էր պայմանավորված: Ամիր քաբիրը, ունենալով անսահմանափակ հնարավորություններ, իրականացրեց բազմապիսի բարեփոխումներ, որոնցից մեկը առաջադեմ ուսումնական հաստատության՝ «Դար օլ-ֆոնուն[11]»-ի հիմնադրումն էր (Բայբուրդյան, 2006, էջ 456-457): Նա գտնում էր, որ Իրանի քաղաքական ու մշակու-

---

[9] Մեծ վեզիր:

[10] Մեծ էմիր:

[11] Ամիր քաբիրը գտնում էր, որ անհրաժեշտ է հրաժարվել մաքթաբներում տառաճանաչություն ձեռք բերելու ավանդական համակարգից: Թեհրանում Դար օլ-ֆոնունի (Գիտությունների տուն) հիմնադրումից հետո Իրան հրավիրվեցին օտարերկրյա ուսուցիչներ: Միևնույն ժամանակ արտասահմանյան երկրներում կրթություն ստացած մասնագետները վերադառնալով Իրան սկսում էին նույն ուսումնական կենտրոնում զինվորական, բժշկության և այլ մասնագիտությունների գծով մասնագետներ պատրաստել: Շահի գլխավոր նպատակը այն էր, որ առաջադեմ մասնագետները կանոնավորեն պետական վարչությունը:

թային առաջընթացի հիմնական գործոններից մեկը աշխարհիկ կրթությունն է, և Դար օլ-ֆոնունի հիմնադրումից հետո նրա կարգադրությամբ արտասահման էին ուղարկվում շնորհալի իրանցիներ՝ այդ թվում հայեր, ուսում ստանալու նպատակով: Արտասահմանում կրթություն ստացած իրանցիները, Իրան վերադառնալուց հետո մեծ դեր խաղացին երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Ուսում ստացած հայերից շատերը տիրապետում էին երեքից ավել լեզուների, և, թերևս, այս երևույթը պատճառներից մեկն էր, որ Ղաջարական Իրանում հայերին կրկին սկսեցին պետական բարձր պաշտոններ տալ (Բայբուրդյան, 2006, էջ 482)[12]:

Այս առումով հատկանշական է քաղաքական գործիչ, դիվանագետ, գրող և հրապարակախոս Միրզա Մելքում խանի (Լազարյան, 2012, էջ 77-79)[13] գործունեությունը[14] (Հովսեփ Մելքումյան, 1834-1908 թթ.) (Թաբաթաբայի Մոհիթ, 1327): Նրա պետական տիտղոսներն են եղել «Նազեմոլդոլե», «Նեզամոլդոլե» և «Նազեմոլմոլք»[15]: Փարիզում բարձրագույն կրթություն ստանալու տարիներին նա ներշնչվում է ազատական գաղափարներով: Ուսումը ավարտելուց և վերադառնալուց հետո նրան

---

[12] Աբբաս Միրզան նույնպես երիտասարդ սերնդի կրթության հարցում մեծ ներդրում է ունեցել: Նա զգաց «ժամանակի ոգին» և սկսեց խրախուսել երիտասարդ իրանցիների ձգտումը դեպի գիտությունը և եվրոպական կրթությունը:

[13] Միրզա Մելքում խանը ուսումը ստացել է Փարիզում:

[14] Միրզա Մելքում խանի կյանքի և գործունեության մասին մանրամասն անդրադարձ է կատարել Մոհիթ-ե Թաբաթաբային իր հեղինակած «Միրզա Մելքում խանի ստեղծագործությունների ժողովածու»-ի մեջ: Տե՛ս Թաբաթաբայի Մոհիթ, Մ., «Մաջմուե ասարե Միրզա Մելքում խան», Թեհրան, 1327, պարսկ./

[15] Ղաջարական արքունիքում որպես վաստակի գնահատում շնորհում էին տիտղոսներ, որոնցից էին «սալթանե», «դոլե» և «մոլք»:

հրավիրում են պալատում Նասեր էդ-Դին շահի անձնական քարտուղարի և թարգմանչի պաշտոն զբաղեցնելու[16]: Եվրոպական մի շարք երկրներում դիվանագիտական գործունեության շնորհիվ բարձր դիրք է զբաղեցրել[17]՝ ժամանակ առ ժամանակ լինելով Իրանի դեսպանը Վիեննայում, Լոնդոնում, Բեռլինում, Հռոմում (Ռային, 1353, էջ 20): Նա հիմնովին վերափոխեց պարսկական նոր գրականությունը՝ հատկապես գեղարվեստական արձակը, ու սկիզբ դրեց դրա զարգացմանը: Մեծ է նրա դերը իրանցի ժողովրդի քաղաքական զարթոնքի գործում: Նա ուղի հարթեց դեպի սահմանադրական իրավակարգը ու առաջիններից մեկն է եղել Իրանում, որ հանդես է եկել հանուն երկրում օրենքների հաստատման և խորհրդարան ստեղծելու (Բայբուրդյան, 2006, էջ 506-508 և Հաղդար, 1396, էջ 79) [18]:

Կարևոր պաշտոնների էին նաև Ծերունի Մասեհյանը՝ նույն ինքը Իբրահիմ Զարգարբաշին կամ ոսկերիչ Իբրահիմը:

---

[16] Միրզա Մելքոմ խանը Դար օլ-ֆոնունում թվաբանության, ընդհանուր երկրաչափության առարկաների և լոգարիթմի դասախոս է եղել:

[17] Գեներալ Միքայել խանը Միրզա Մելքոմ խանի փոքր եղբայրն էր, որը 1874-1882 թթ. և 1886-1889 թթ. եղել է Լոնդոնում Իրանի դեսպանության առաջին փոխանորդը:

[18] Իրանցի մտավորականներն ու քաղաքական գործիչները Միրզա Մելքոմ խանին համարել են «Իրանի սահմանադրության», «սահմանադրական գաղափարի դրոշակակիր», «ազատության շարժման առաջնորդ» և այլն: Միրզա Մելքոմ խանի գործունեության մասին մանրամասն տե՛ս Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Երևան, 2006, էջ 506-508: Միայն Միրզա Մելքոմ խանի նամակները ուսումնասիրելով կարողանում ենք նրա առաջադեմ գաղափարների շուրջ կարծիք կազմել: Այստեղ մեջբերում ենք նամակներց մեկը. «Նորից հազար լեզվով աղերսում եմ, որ անհապաղ բանկ կառուցեք: Որովհետև առանց բանկի երկաթուղի, առևտուր, հարկ, փող, բողոքելու, դատի տալու պահանջ չի կարող լինել: Նորից, իմ խոսքն այն չէ, որ դուք բանկը իմ կողմից կառուցեք, կառուցե՛ք ցանկացած մեկի կողմից՝ խորհրդակցելով ցանկացած կառավարության հետ»:

Նա շուրջ 50 տարի եղել է պալատական ակնագործ և ստացել պատվո բազմաթիվ շքանշաններ: Նրա ամենահայտնի աշխատանքը գոհարակուռ երկրագունդն է, որը պատրաստվել է 1875 թ. Նասեր էդ-Դին շահի կարգադրությամբ[19]: Ներկայումս այն համարվում է Իրանի ազգային հարստությունը և պահվում է ԻԻՀ կենտրոնական բանկի Գոհարեղենի թանգարանում: Ծերունի Մասեհյանի որդին՝ Հովհաննես խան Մասեհյանը (1864-1931 թթ.), քաղաքական գործիչ, դիվանագետ, հրապարակախոս և թարգմանիչ էր (Լազարյան, 2012, էջ 73-74) [20]: Նրա պետական տիտղոսներն են եղել «Մոսաեդոլսալթանե» և «Էմադոլվոզարա»: Մեծ է Մասեհյանի դերը նաև պարսկական դպրոցների հիմնադրման և ընդարձակման գործում: Հովհաննեսը կրթություն է ստացել Թեհրանում, այնուհետև 1881 թ. ընդունվել «Փարիզի Քոլեջ դե Ֆրանսը», որը գերազանցությամբ ավարտում է 1884 թ. փիլիսոփայություն, իրավագիտություն, քաղաքատնտեսություն և գրականություն մասնագիտացմամբ: Իրան վերադառնալուց հետո որպես թարգմանիչ սկսել է աշխատել Իրանի արտաքին գործերի նախարարությունում: Որպես Նասեր էդ-Դին շահի պատվիրակության ավագ թարգմանիչ 1887 թ. գործուղվել է մասնակցել Վիկտորիա թագուհու գահակալության 50-ամյա հոբելյանա-

---

[19] Երկրագունդի տրամագիծը մոտ 66 սմ է, բարձրությունը՝ 110 սմ: Պատրաստվել է 34 կգ բարձր հարգի ոսկուց, որի մակերեսը ամբողջությամբ ծածկված է թանկարժեք քարերով: Մայրցամաքները, օվկիանոսները, ծովերը, անապատները, երկրների սահմանները և աշխարհագրական յուրաքանչյուր հատված առանձնանում է թանկարժեք քարի տեսակով:

[20] Հովհաննես խան Մասեհյանի հայրը եղել է անվանի ոսկերիչ Ծերունի Մասեհյանը, իսկ մայրը՝ Աննա Երվանդյանը, Մոզաֆար էդ-Դին Միրզայի ֆրանսերեն լեզվի ուսուցիչը:

կան արարողությանը, իսկ 1897 թ.՝ Մոզաֆֆար էդ-Դին շահի կողմից գործուղվել է Լոնդոն շնորհավորելու Վիկտորիա թագուհու ծննդյան 80-ամյակն ու գահակալության 60-ամյակը: 1912 թ. Մասեհյանը եղել է Իրանի դեսպանը Գերմանիայում (1912-1916 թթ. և 1921-1927 թթ.), Մեծ Բրիտանիայում (1927-1929 թթ.) և Ճապոնիայում (1930-31 թթ.): Հովհաննես Խան Մասեհյանը տիրապետել է հայերեն, պարսկերեն, թուրքերեն, հունարեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն և ռուսերեն լեզուներին: Դեռևս պալատական թարգմանիչ եղած տարիներին թարգմանել է Ալեքսանդր Դյումայի, Գյոթեի, Բայրոնի, Հայնեի, Օմար-Խայյամի, Տագորի և Շեքսպիրի գործերը[21]: Ըստ Գևորգ Էմինի՝ Մասեհյանի թարգմանությունները «գերազանց են» և «հրաշալի են հնչում հայերենով» (Էմին, 1974, էջ 211):

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին երկրում տեղի ունեցած սահմանադրական շարժմանը գործուն մասնակցություն են ունեցել իրանահայերը: Այս առումով կարևոր է հիշել 1905 թվականի հայտնի գործիչներից մեկին՝ Եփրեմ խան Դավթյանին (հայտնի նաև Եփրեմ խան Արմանի անունով, 1868-1912 թթ.): Իրանական պատմագրությունը Եփրեմ խանին բնութագրում է որպես առաջադեմ բուրժուադեմոկրատական գործիչ և նրան համարում ժողովրդական հերոս (Լազարյան, 2012, էջ 155-156) [22]: Եփրեմ խանի համախոհներից էր Պետրոս Մելիք Անդրեասյանը (հայտնի որպես Պետրոս խան): Սահմանադրական շարժման առաջին օրերին համախմբելով իրանահայ հայրենասեր երիտասարդներին՝ միանում է Եփրեմ խանի ուժերին: Իրանի Գոհարեղենի թանգարանն իր գոյությամբ

[21] Ավելին տե՛ս Իրանահայ հանրահայտ գործիչներ (38) - Pars Today դիտման օր (19.12.2021)

[22] Եփրեմ խանը մասնակցել է ավելի քան 60 խոշոր և փոքր մարտերի:

պարտական է Պետրոս խանին։ Բանն այն է, որ Սահմանադրական շարժման օրերին Եփրեմ խանը Պետրոս խանին հանձնարարում է թալանից ու կողոպուտից պահպանել թագավորական հարստությունն ու թանկարժեք քարերը, որն էլ գերազանց կերպով է կատարում իրեն տրված առաջադրանքը (Լազարյան, 2012, էջ 154) [23]։

Իրանահայ գաղութի և ընդհանրապես Իրանի 19-րդ դարի մշակույթի պատմության մասին խոսելիս չենք կարող անտեսել Հակոբ Հովնաթանյանին։ Ըստ Մանյա Ղազարյանի և նկարչի ժառանգների տեղեկությունների՝ Հակոբը Պարսկաստան է ներգաղթել 1866-1867 թթ.։ Սկզբնական շրջանում ապրել ու ստեղծագործել է Թավրիզում, հետագայում տեղափոխվել է Թեհրան։ 1860-ական թթ. Իրան տեղափոխվելու և այնտեղ հաստատվելու պատճառն այն էր, որ Թիֆլիսում լուսանկարչության զարգացումը նպաստում է դիմանկարչի պատվերների նվազմանը։ Պալատական հմուտ դիմանկարիչ Սանի օլ-Մոլքի (1814-1866 թթ.) մահից հետո Հակոբ Հովնաթանյանը մուտք է գործում դաջարական արքունիք՝ դառնալով արքունական նկարիչ։ Ըստ Մանյա Ղազարյանի ուսումնասիրությունների՝ Հակոբ Հովնաթանյանը Իրանում ինը աշխատանք է ստեղծել։ Նասեր էդ-Դին շահը նկարչին շնորհել է «Նաղաշ բաշի» (Նկարիչների գլխավոր) տիտղոսը, ինչպես նաև «Էլմի» (Գիտություն) շքանշանը։

Հակոբ Հովնաթանյանի թավրիզյան շրջանի առաջին աշխատանքներից է Իմամ Ալիի դիմանկարը, որից էլ, ըստ Մանյա Ղազարյանի, «հետագայում արտանկարել են պետական

[23] Աբրահամ խան Բախթիարին և գնդապետ Գրիշ խան Դանիելյանը ընդգրկված են եղել Եփրեմ խանի հեղափոխական խմբի կազմում։

շքանշանի վրա» (Ղազարյան, 1974, էջ 228)։ Նկարիչը նկարել է նաև Նասեր էդ-Դին շահին և Մոզաֆեր էդ-Դին շահին (Ղազարյան, 1974, էջ 236-237)։ Նկարիչը Իրանում ստեղծած մեկ այլ աշխատանքում նույնպես անդրադարձել է հասակով մեկ կանգնած Նասեր էդ-Դին շահին, որի մի ձեռքին հեռադիտակ է, իսկ մյուսը դրված է գոտկատեղին՝ թնդանոթին թիկնած։ Կտավը, որը իր չափսերով նույնպես մեծ է, պահվում է Վիեննայի Բելվեդերյան թանգարանում (Թաջարյան, 2022, էջ 157-158)[24]։

1881-1882 թթ. Իրանում հիմնադրվեց առաջին թատերասրահը։ Սկզբնական շրջանում բեմ էին բարձրանում միայն հայ դերասանները, սակայն հետագայում Հարություն Մարտիրոսյանի և մի խումբ թատերասերների (վերջինս աշխատում էին Սպահանի թատրոնում) ջանքերով «Իրան ջավան» («Երիտասարդ Իրան») թատերական խմբի և Արտո Տերյանի ղեկավարությամբ բեմադրեցին առաջին համատեղ ներկայացումը։ Պարսկական գեղարվեստական ֆիլմում նկարահանված առաջին դերասանուհին նույնպես հայազգի Ասիա Կոստանյանն է եղել, որ նկարահանվել է «Հաջի աղան կինոյի դերասան» կինոնկարում։ Ասյա Կոստանյանը նկարահանվել էր նաև «Աբի Ռաբի» ֆիլմում, որի սցենարիստը Ավանես Օգանյանցն է » (Լազարյան, 2012, էջ 353-354)։

---

[24] Վիեննայի Բելվեդերյան թանգարանում 2021 թ. սեպտեմբեր 9-ից մինչև 2022 թ. մարտ 27-ը «IN-SIGHT» ցուցահանդեսների շարքի ներքո ցուցադրվեց Հակոբ Հովնաթանյանի, Ռադեն Սալեհի և Օսման Համդի Բեյի ստեղծագործություններից մեկական կտավ։ Այս շարքն անցկացվում է տարեկան երեք անգամ և կենտրոնանում է սեփական թանգարանի՝ Բելվեդերի հավաքածուի եզակի օրինակների վրա։ Հակոբ Հովնաթանյանին պատկանող որոշ ստեղծագործությունների հետ միասին, վերը նշված աշխատանքը նկարագրվել և ենթարկվել են արվեստաբանական վերլուծության։

Իրանահայերը 1808 թվականին վարպետ Հարությունի գլխավորությամբ կառուցեցին Թեհրանի հայկական առաջին եկեղեցին, որը Թադեոս-Բարդուղեմեոս կոչվեց: Եկեղեցին գտնվում է Հազրաթ շուկայում և Մշակութային ժառանգություն կազմակերպության կողմից գրանցվել և հովանավորվում է որպես մշակութային հուշարձան (Լազարյան, 2012, էջ 277): Հայ ճարտարապետներից առավել մեծ համբավ են վայելել Մարգար Գալստյանը (Էլգալ): Անվանի ճարտարապետը իր բարձրագույն կրթությունը ստացել էր Լոնդոնի թագավորական քոլեջի ճարտարապետության բաժնում: Նրա նախագծով կառուցված առաջին երևելի շինությունը Թեհրանի կենտրոնական փոստատան շենքն է: Էլգալը կառուցել է նավթային ընկերության մի շարք կառույցներ, Թեհրանի արտաքին գործերի նախարարության շենքը, ինչի համար արժանացել է պատվո շքանշանի (Լազարյան, 2012, էջ 239):

Իրանահայերը, մեծ դերակատարություն են ունեցել և այժմ էլ շոշափելի դեր ունեն երկրի շինարարական ոլորտում՝ տարբեր ժամանակներում Իրանի տարբեր քաղաքներում կառուցելով բազմաթիվ պետական, հասարակական կառույցներ, բնակելի շենքեր:

Բժշկության ասպարեզում արժանահիշատակ է Դավիթ Մկրտչյան-Դավիդյանցը նույն ինքը՝ Հեքիմ Դավուդ խան արմանին կամ Դավուդ խան մասիհին: Նա 1805 թ. մեկնել է Հնդկաստան՝ բժշկական կրթություն ստանալու: 1812 թվականին ավարտում է Կալկաթայի բժշկական քոլեջը և աշխատանքի անցնում անգլիական բանակում: Դավուդ խանը խոլերա հիվանդության մասին իր լայնածավալ հետազոտություններով հանդես է եկել Փարիզում և Անգլիայում: Բազմաթիվ երկրներում փորձ ձեռք բերելուց հետո վերադառնում է Իրան և դառ-

նում Ղաջարական պալատական հատուկ բժիշկ։ Դավուդ Խանը որպես Միրզա Թաղի Խան Ամիր քաբիրի ներկայացուցիչ մեկնել է Ավստրիա ռազմական աշխատանքի և հարակից հարցերի ուսումնասիրության գիտնականների գտնելու և Դար օլ ֆոնունում ֆիզիկա, քիմիա և դեղագործություն դասավանդելու նպատակով։ Այսպիսով, Իրան հրավիրվեցին 7 մասնագետներ և դարձան Դար օլ ֆոնուն համալսարանի առաջին դասախոսները։ Դավուդ խանի որդին՝ Հովնանը, հայտնի որպես «Հովնան խան», նույնպես հայտնի բժիշկ էր և ծառայում էր ղաջար թագավորների համար (Լազարյան, 2012, էջ 245-247)։

Բժշկությունից կրկին անցում կատարելով արվեստին՝ պետք է նշել կարևոր իրադարձության մասին։ Իրանում լուսանկարչությունը մուտք է գործում ղաջարների կառավարման ժամանակահատվածում։ Լուսանկարչությունը դառնում է ղաջար թագավորների՝ հատկապես արվեստասեր թագավոր Նասեր էդ-Դին շահի կենցաղի բաղկացուցիչ տարրերից մեկը։ Իրանում մեծ հեղինակություն է վայելում ծագումով հայ Անթուան Սևրուգինի լուսանկարները։ Սևրուգինը դարձավ քմահաճ Նասեր էդ-Դին շահի անձնական, պալատական լուսանկարիչը։ Առօրյա կյանքում, ճանապարհորդությունների, ծիսական արարողությունների ընթացքում, հասարակական և պալատական կարևոր իրադարձությունների ժամանակ Սևրուգինը վավերացրեց Ղաջարական Իրանը՝ պարզ, անմիջական և բնական գրավչությամբ։ Լուսանկարիչը իր արժանի վաստակի համար թագավորի կողմից «Խան» տիտղոսի հետ

միասին պարգևատրվեց նաև «Շիր օ խորշիդ» ադամանդակուռ շքանշանով[25]:

Ժամանակի սղության պատճառով այստեղ մի շարք անձանց անուններ չեն նշվել: Անշուշտ, այսքանով հանդերձ կարող ենք պնդել, որ իրանահայերը իրենց ավանդն են ունեցել Իրանի և մի շարք այլ պետությունների միջև անգնահատելի հարաբերությունների հաստատման գործում:

Այսպիսով, իրանահայ համայնքի պատմությունը մեր ժողովրդի ու երկրի պատմության էական մասերից է: Այդ պատմության կերտողները, դարեր շարունակ օտար միջավայրում իրենց արմատներին հավատարիմ մնալով, իրանցիների շրջանում ձեռք են բերել վստահելի, շիտակ, նվիրված և հայրենասեր քաղաքացիների համբավ, որը կրում է շարունակական բնույթ:

YVETTE TAJARIAN, PhD in art history

Art Historian Senior researcher at the Department of Oriental studies at The Mesrop Mashtots Institute of Ancient Manuscript, The Matenadaran. Associate professorar, Chair of History and Theory of Armenian Art, YSU

e-mail: yvettetaj@yahoo.com

FAMOUS ARMENIANS IN QAJAR IRAN

The significance of the Qajar dynasty in the modern history of Iran has been widely studied in historiography. The assessment of that dynasty

---

[25] Եթե Սիրիայում ու Բեյրութում երաշխավորում էին ձեռք բերել Ֆելիքս Բոնֆիսի (1831-1885 թթ.), Եգիպտոսում՝ Լուկսորում Անտոնի Բետոնի (1825-1903 թթ.), Կոստանդնուպոլսում՝ Աբդուլահյան եղբայրների (Վիչենը (1820–1902 թթ.), Հովսեփը (1830–1908 թթ.) և Գևորգը (1839–1918 թթ.)) կամ Պասգալ Սեպահի (մահացել է 1890 թ.), ապա Իրանում մեծ հեղինակություն էին վայելում Անթուան Սևրուգինի լուսանկարները:

has not always been unequivocal. It was characterized as a flourishing period on the one hand, and a period of decline on the other.

During the Qajar Dynasty, the Iranian Armenians made immense contribution towards the development of Iran's economy and arts. They were also able to make obvious advancements in the social and political life of the country receiving high-ranking positions.

In this regard, Mirza Melkum khan's (Hovsep Melkumyan 1834-1908) activities are worth mentioning. He was a diplomat, writer, and publicist in Iran. Another significant figure was Tseruni Masehyan (Ibrahim Zargarbashi or goldsmith Ibrahim). He used to serve as a palace goldsmith for fifty years and received a number of medals. His most famous work is the "Globe of Jewels" made by the order of Naser al-Din shah in 1875. Among other well-known figures were Hovhannes khan Masehyan (1864-1931, an official, diplomat, writer, and interpreter) and Set khan (Astvatsatur or Tsatur, Ambassador of Iran in London). His son, Lieutenant General was the spouse of Hakob Hovnatanyan's daughter Nune. Of course we have to mention Antoin Sewruguin, who captured this period with photos. Antoine Sevruguin belongs to the generation of those rare photographers who introduced the artistic photography to the court of Naser ed-Din Shah in the second half of the 19th century.

One of the famous activists of the Persian Revolution of 1905 was Yeprem khan Davidian (1868-1912). In Iranian history Yeprem khan is mentioned as a progressive bourgeois-democratic leader and is considered a national hero.

The above-mentioned individuals, along with many others, come to prove that Armenians played a significant role in forming Iran's social, political, and cultural life back then. The famous Armenian people life and activities are an inseparable part of the history and culture of Iran, which is also a witness to the contribution of Armenians to Iranian culture.

Հավելվածներ

Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ե, վավ. 633, բնագիր, Մեծ. 36 x 50.5 սմ



Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 144, բնագիր, Մեծ. 30 x 41.5 սմ



Միրզա Մելքոմ խան (Հովսեփ Մելքոմյան 1834-1908 թթ.)

Ծերունի Մասեհյանի նույն ինքը Իբրահիմ Զարգարբաշիի կամ ոսկերիչ Իբրահիմի և իր խմբի պատրաստած գոհարակուռ երկրագունդը։

Նասեր էդ-Դին շահը և Ծերունի Մասեհյանի կողմից պատրաստված գոհարակուռ երկրագունդը։

Հովհաննես խան Մասեհյան (1864-1931 թթ.)

Եփրեմ խան Դավթյան (հայտի որպես Եփրեմ խան Արմանի 1868-1912 թթ.)

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բայբուրդյան Վ., *Իրանի պատմություն*, Երևան, 2006:
2. Գորոյանց Ն., *Պարսկաստանի հայերը*, Թեհրան, 1968:
3. Եգանյան Հ. Մ., *Հասարակական-քաղաքական հոսանքները Իրանում 19-րդ դարի վերջին- 20-րդ դարի սկզբին,* Երևան, 1966:
4. Էմին Գ., *«Յոթ երգ Հայաստանի մասին»,* Երևան, 1974:
5. Թաբաթաբայի Մոհիթ, Մ., *«Մաջմուե ասարե Միրզա Մելքում խան»,* Թեհրան, 1327 (պարսկ.):
6. Թաջարյան Ի., *Մատենադարանի Ղաջարական արվեստի նմուշները*, Երևան, 2021:
7. Թաջարյան Ի., «Ղաջարական գեղանկարչական ավանդույթների արտացոլանքը Հակոբ Հովնաթանյանի արվեստում», Բանբեր հայագիտության, Երևան, 2022:
8. Լազարյան Ժ., Իրանահայոց հանրագիտարան, Երևան, 2012:
9. Կոստիկյան Ք., Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, Երևան, 2021:
10. Հաղդար, Ա., Նամեհայե Միրզա Մելքում խան Նազեմ օլ-Դոլե, «Միրզա Մելքում խան Նազեմ օլ-Դոլեի նամակները», Թեհրան, 1396 (պարսկ.):

11. Ղազարյան Մ., Հայ կերպարվեստը XVII-XVIII դարերում, Երևան, 1974։

12. Մալեքզադե Մ., Թարիխե Էնղելաբե Մաշրությաթե Իրան, «Իրանի սահմանադրության հեղափոխության պատմությունը», Թեհրան, 1328 (պարսկ.)։

13. Ռային, Ի., Միրզա մելքում խան, Թեհրան, 1353, երկրորդ հրատ. (պարսկ.)։

14. Yarshater E., Observations on Nasir al-Din Shah, Qajar Iran: Political, Social and cultural Change, 1800-1925. Edinburg, 1983.